Կարգապահական գործ թիվ ԿԳ-17186

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի մայիսի 03-ի թիվ 103-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/79-Ա

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Հրանտ Անանյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Մելանյա Առուստամյանի և Արայիկ Ղազարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արթուր Գրիգորյանին (արտոնագիր թիվ 255) և Կարեն Մկրտչյանին (արտոնագիր թիվ 1663) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Վարդիթեր Միքայելյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Պալատ հայտնել է, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փ. 135/2 հասցեում գտնվող տաղավարը քաղաքային իշխանությունների կողմից նախատեսվել է ապամոնտաժել: Այս հարցով իրավաբանական օգնություն ստանալու նպատակով Վարդիթեր Միքայելյանը դիմել է փաստաբան Արթուր Գրիգորյանին և փաստաբան Կարեն Մկրտչյանին **(այսուհետ նաև՝ Պատասխանող կամ Պատասխանողներ)**: 16.05.2017թ. տրված լիազորագրով Դիմողը նշված փաստաբաններին լիազորել է ներկայացնել իր շահերը, որի համար 26.06.2017թ. փաստաբաններին վճարել է 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, սակայն փաստաբանների կողմից Դիմողի հետ գրավոր պայմանագիր չի կնքվել:

Դիմողը նշել է նաև, որ լիազորագրի տրման օրվանից փաստաբանները Դիմողի շահերը պաշտպանելու նպատակով որևէ գործողություն չեն արել, խուսափում են հանդիպելուց, Դիմողի հեռախոսազանգերին չեն պատասխանում,

գրասենյակի վայրը, առանց Դիմողին տեղեկացնելու, փոխել են կամ չեն ցանկանում Դիմողին ընդունել:

Դիմողը խնդրել է պատասխանատվության ենթարկել փաստաբաններ Արթուր Գրիգորյանին և Կարեն Մկրտչյանին, իսկ դիմումին կից ներկայացրել է անձնագրի, սեփականության վկայականի, լիազորագրի և իրավաբանական ծառայությունների համար 100.000 ՀՀ դրամի վճարման վերաբերյալ անդորրագրի պատճենները:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի կողմից 23.11.2017թ. թիվ 465-Ա/ԿԳ-17186 որոշմամբ փաստաբաններ Արթուր Գրիգորյանի (արտոնագիր թիվ 255) և Կարեն Մկրտչյանի (արտոնագիր թիվ 1663) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.7.2, 3.1.3, 3.1.8., 3.5.5, 3.6.1 և 3.6.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

28.11.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Գևորգ Մարտիրոսյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Նախապատրաստող անձի կողմից Դիմողին ներկայացվել է գրավոր առաջարկություն՝ գրավոր բացատրություն ներկայացնելու մասին, սակայն Դիմողը չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Դիմողը ներկայացել է և ըստ էության հաստատել է դիմումում նշված հանգամանքները: Դիմողը, պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին հայտնել է, որ իրենք՝ 5 տաղավարների սեփականատերերը, միասին են դիմել Պատասխանողներին որպեսզի վերջիններս կատարեն հարցում քաղաքապետարան և պարզեն, ում է վաճառվել հողամասերը և սկսեն հողամասերի սեփականաշնորհման գործընթացը: Վճարումը կատարվել է Խաչիկ Սահակյանի կողմից՝ իրենց կարճ հաղորդագրությամբ ուղարկված հաշվեհամարին: Իր և Պատասխանողների միջև իրավաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր չի կնքվել: Դիմողը նշել է, որ Արթուր Գրիգորյանը չի տրամադրել իրեն տեղեկություններ գործի ընթացքի մասին, և առայսօր որևէ գործողություն չի կատարել: Արթուր Գրիգորյանը չի պատասխանել հեռախոսազանգերին, իսկ Կարեն Մկրտչյանը մի քանի անգամ պատասխանել է դիմողի հեռախոսազանգերին և հայտնել, որ զբաղված է:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Նախապատրաստող անձի կողմից Պատասխանողներին ներկայացվել է

գրավոր առաջարկություն՝ գրավոր բացատրություն ներկայացնելու մասին, սակայն Պատասխանողները չեն ներկայացրել:

Խորհրդի նիստին Պատասխանողները չեն ներկայացել, թեև պատշաճ ծանուցված են եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով Դիմողի միջնորդությամբ որպես վկա հրավիրվել են Խաչիկ Սահակյանը և Արման Կարապետյանը:

Վկա Խաչիկ Սահակյանը հայտնել է, որ գրավոր պայմանագիր չի կնքվել Դիմողի և Պատասխանողների միջև: Նա նշել է նաև որ Արթուր Գրիգորյանը սկզբում պատասխանել է հեռախոսազանգերին, սակայն հետագայում չի պատասխանել: Խաչիկ Սահակյանը նշել է նաև, որ նախնական պայմանավորվածության համաձայն Արթուր Գրիգորյանը պետք է այցելեր Գյումրի և անձամբ տեսներ տաղավարները, սակայն այդպես էլ չի գնացել: Նա հավելել է, որ Պատասխանողները որևէ գործողություն չեն իրականացրել Դիմողի շահերի պաշտպանության համար: Խաչիկ Սահակյանը նշել է, որ գրասենյակի վայրի փոփոխության մասին իմացել են փաստաբան Արթուր Գրիգորյանից և հետագա հանդիպումը եղել է նոր գրասենյակում:

Վկա Արման Կարապետյանը հայտնել է, որ գործը հանձն է առել Արթուր Գրիգորյանը և հիմնական աշխատանքը նա պետք է կատարեր: Նա նշել է նաև, որ որևէ աշխատանք չեն կատարել և հեռախոսազանգերին չեն պատասխանել՝ չտրամադրելով տեղեկություններ գործի ընթացքի մասին:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

22.01.2018թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Գևորգ Մարտիրոսյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն նախապատրաստողը գտել է, որ, եթե Պատասխանողները Խորհրդի կողմից կարգապահական գործի քննության ընթացքում չներկայացնեն դիմումում նշված փաստական հանգամանքները հերքող ապացույցներ, ապա Պատասխանողների կողմից խախտվել է Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5, 3.6.1 և 3.6.3 ենթակետերը:

29.01.2018թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի մայիսի 03-ի, ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ*

այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմողը հանդիսանում է Շիրակի մարզ, Գյումրի ք., Շահումյան փողոց 135/2 հասցեում գտնվող տաղավարի սեփականատերը
   Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, սեփականության իրավունքի վկայականի պատճենով:
2. Դիմողը և այլ քաղաքացիներ 16.05.2017թ-ին երկու տարի ժամկետով լիազորել են Պատասխանողներին լինել իրենց ներկայացուցիչը նշված գույքի նկատմամբ իրականացվող վարչական և/կամ քրեական և/կամ քաղաքացիական վարույթներում ներկայացուցչության իրականացման համար.
   Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, լիազորագրի պատճենով:
3. Իրավաբանական ծառայությունների համար «ՍՍ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի թիվ 1930047714350100 բանկային հաշվեհամարին 26.06.2017թ-ին փոխանցվել է 100.000 ՀՀ դրամ: Անդորրագրի նպատակը դաշտում նշված է հետևյալը՝ *իրավաբանական ծառայությունների համար Միքայելյան Վարդիթեր Միքայելի Շահումյան 135/2 տաղավար*:
   Նշված փաստը հաստատվում է «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի «Կումայրի» մասնաճյուղի կողմից 26.06.2017թ-ին տրված կանխիկ մուտքի անդորրագրով:
4. Փաստաբան Արթուր Գրիգորյանը հանդիսանում է «ՍՍ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ տնօրենը:
   Նշված փաստը հաստատվում է «ՍՍ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցման 22.01.2018թ. էլեկտրոնային քաղվածքով:
5. Դիմողի և պատասխանող փաստաբանների միջև չի կնքվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր:
   Նշված փաստը հաստատվում է պայմանագրի գոյության ապացույցի բացակայությամբ պայմանավորված դիմողի ժխտողական պնդումով:
6. Պատասխանող փաստաբանների կողմից Դիմողին ցույց չի տրվել իրավական օգնություն:
   Նշված փաստը հաստատվում է դիմումով, իրավաբանական օգնությանն ուղղված գործողությունների գոյության ապացույցի բացակայությամբ պայմանավորված դիմողի ժխտողական պնդումով, ինչպես նաև «Դատալեք» դատական տեղեկատվական համակարգում կատարված որոնման արդյունքում որևէ տվյալի չհայտնաբերմամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արթուր Գրիգորյանի (արտոնագիր 255, ստացված՝ 10.10.1995թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում չհաշված սույն կարգապահական վարույթը 10 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (5 ավարտված և 5 ընթացիկ վարույթ), որից 5 կարգապահական վարույթով Պալատի Խորհրդի որոշմամբ Արթուր Գրիգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կարեն Մկրտչյանի (արտոնագիր 1663, ստացված՝ 08.02.2013թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում չհաշված սույն կարգապահական վարույթը 4 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (4 ընթացիկ վարույթ):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբաններ Արթուր Գրիգորյանը և Կարեն Մկրտչյանը ենթակա են կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի խախտման մասով.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Վերլուծելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը Պալատի Խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ

կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Դիմողը լիազորել է Պատասխանողներին ներկայացնել իր շահերը, մասնավորապես կատարել որոշակի հարցումներ Դիմողին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փ. 135/2 հասցեում գտնվող տաղավարի տակ գտնվող հողամասի սեփականատերերի վերաբերյալ, ինչպես նաև սկսել հողամասի սեփականաշնորհման գործընթացը: Մինչդեռ Պատասխանողների կողմից որևէ գործողություն չի իրականացվել: Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ փաստաբանները անհրաժեշտ և բավարար միջոցներ չեն գործադրել իրենց վստահորդների իրավունքների պաշտպանությունն իրականացնելու ուղղությամբ:

Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի կողմից ցուցաբերվող մասնագիտական և անձնական բարեխղճությունն իր վստահորդի և նրա գործի նկատմամբ չի կարող լինել բավարար՝ առանց իր վստահորդի հետ մշտական կամ պարբերական կապի, տեղեկատվության փոխանակման, գործի ընթացքի վերաբերյալ փաստաբանի կողմից վստահորդին անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման, գործի հնարավոր արդյունքի և վստահորդի քայլերի վերաբերյալ պատշաճ ջանասիրությամբ տրված խորհրդատվության:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանող Արթուր Գրիգորյանը չի պատասխանել Դիմողի զանգերին և վստահորդին անհրաժեշտ տեղեկատվություն չի տրամադրել գործի ընթացքի վերաբերյալ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանող Կարեն Մկրտչյանի կողմից Կանոնագրքի 3.6.1

ենթակետի խախտում թույլ տալու հանգամանքը:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արթուր Գրիգորյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի խախտում, իսկ փաստաբան Կարեն Մկրտչյանը՝ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտում, ինչի համար փաստաբաններն ենթակա են կարգապահական պատասխանատվության:

7.2. Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ *գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակական գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանալուց երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքեր կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Սույն դրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի բարեխիղճ, փոխադարձաբար արդյունավետ և գործարար շրջանառության էթիկայի տեսանկյունից ընդունելի գործելակերպի համար: Միևնույն ժամանակ, փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագիրը թույլ է տալիս խուսափել տարաձայնություններից կամ դրանց առաջացման դեպքում ծառայում է վեճի լուծման ապացուցողական հիմք:

Կանոնագրքի 3.1.3 կետով գրավոր պայմանագրի առումով արվում է մեկ բացառություն՝ թույլատրելով փաստաբանին վստահորդի հետ գրավոր պայմանագիր կնքել նրա՝ հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից 2 ամսվա ընթացքում, այն էլ, եթե առկա են գործի որոշ առանձնահատուկ հանգամանքներ, որոնք կամ գործի ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Կանոնագրքով, մեծ կարևորություն տալով փաստաբանի և վստահորդի միջև իրավահարաբերությունների գրավոր ամրագրմանը, ցանկալի է համարվում ընդհուպ անհատույց հիմունքներով իրավաբանական օգնության ցուցաբերումը գրավոր պայմանագրի հիման վրա (3.1.5 ենթակետ): Ընդ որում, Կանոնագրքի 3.1.3 կետի շարադրանքից հետևում է, որ գրավոր պայմանագիր կնքելու պարտականությունը հստակորեն դրվում է փաստաբանի վրա: Այսինքն, եթե պատվիրատուն կամ վստահորդը չեն պնդում գրավոր պայմանագրի կնքման վրա կամ ցանկանում են փաստաբանի հետ հարաբերվել՝ առանց իրավական հիմքի, փաստաբանը պարտավոր է նրանց իրազեկել, բացատրել դրա անթույլատրելիության վերաբերյալ և հրաժարվել առանց պայմանագրի՝ նրանց իրավաբանական ծառայություններ մատուցելուց:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Դիմողին իրավական օգնություն տրամադրելու համար «ՍՍ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ հաշվեհամարին փոխանցվել է 100.000 ՀՀ դրամ: Նշված ընկերության տնօրեն է հանդիսանում Պատասխանող Արթուր Գրիգորյանը: Այսինքն, Պատասխանողներն Դիմողին իրավական օգնություն տրամադրելու պարտականությունը ստանձնել են

վճարովի հիմունքներով, ուստի պարտավոր էին պայմանագիրը կնքել ողջամիտ ժամկետում՝ հանձնարարությունը փաստացի ստանալուց երկու ամսվա ընթացքում, ինչը չեն կատարել:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողները թույլ են տվել Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտում, ինչի համար ենթակա են կարգապահական պատասխանատվության:

7.3. Կարգապահական տույժի ընտրությունը.

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում խախտումների վտանգավոր բնույթը, այն հանգամանքը, որ Պատասխանողները թույլ են տվել երկու կարգապահական խախտում՝ խախտելով և՛ փաստաբանի վարքագծի ընդհանուր սկզբունքներում սահմանված կանոնի պահանջները, և՛ փաստաբանի և վստահորդի միջև հարաբերությունները կարգավորող կանոնի պահանջները, որոնց արդյունքում սահմանափակվել է իրենց վստահորդի հիմնարար իրավունքներից մեկը՝ պաշտպանության իրավունքը, ինչպես նաև՝ փաստաբանների անձը բնութագրող հանգամանքները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն.
2) խիստ նկատողություն.
3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
4) տուգանք (…):

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տուգանքի չափը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը, որը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Տուգանքը փաստաբանը վճարում է փաստաբանների պալատի բյուջե:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է Արթուր Գրիգորյանի նկատմամբ ընտրել «տուգանք» կարգապահական տույժի տեսակը՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, իսկ Կարեն Մկրտչյանի նկատմամբ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

7.4. Կանոնագրքի 3.6.3 ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 3.6.3 ենթակետի համաձայն՝ *Իր գործունեության հասցեն կամ հեռախոսահամարը փոխելու դեպքում, փաստաբանը պարտավոր է վստահորդներին, ինչպես նաև Պալատին, ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր հասցեի կամ հեռախոսահամարի մասին:*

Սույն կարգապահական գործով հաստատված փաստերից հետևում է, որ Պատասխանողները փոխել են իրենց գործունեության հասցեն, սակայն այդ մասին

տեղյակ են պահել Դիմողին, քանի որ նրանց վերջին հանդիպումը տեղի է ունեցել նոր գրասենյակում: Խորհուրդը 3.6.3 ենթակետի խախտման հարցը կարող է քննարկել միայն այն դեպքում, երբ փաստաբանը փոխում է իր գործունեության հասցեն և նոր հասցեի վերաբերյալ չի տեղեկացնում իր վստահորդին:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 3.6.3 ենթակետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արթուր Գրիգորյանին (արտոնագիր՝ 255) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար:

2. Փաստաբան Արթուր Գրիգորյանի (արտոնագիր՝ 255) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 50.000 ՀՀ դրամի չափով:

3. Փաստաբան Արթուր Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.6.3 ենթակետի մասով՝ կարճել:

4. Փաստաբան Կարեն Մկրտչյանին (արտոնագիր՝ 1663) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտման համար:

5. Փաստաբան Կարեն Մկրտչյանի (արտոնագիր՝ 1663) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

6. Փաստաբան Կարեն Մկրտչյանի (արտոնագիր՝ 1663) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.6.1 և 3.6.3 ենթակետերի մասով՝ կարճել:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյան

03 մայիսի 2018թ.
թիվ ԿԳ/79-Ա
ք. Երևան